

Ա-42

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԱՐԱՆՅԱՆ ԶՈՆ ԶՈՐԶԻ

ԱՐՐԱՐԱՄ ՆԱՅԱՊԵՏ
(ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՆՆԱՇԽԱՐԻԻ ԵՎ ՔԱՆԱԱՆԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Մ.Թ.Ա.ԻՎ-ՈՒ ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ)

Է.00.02 - «Ընդհանուր պատմություն» մասնագիտությամբ

պատմական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման

ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2005

ՏԻ-Ա

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական խորհրդատու պատմական գիտությունների դոկտոր Ա.Վ.Քոսյան


Պաշտոնական ընդդիմախոսներ պատմական գիտությունների դոկտոր Հ.Ավետիսյան
պատմական գիտությունների թեկնածու Ա.Ե.Մովսիսյան

Առաջատար կազմակերպություն ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2005թ. նոյեմբերի 24-ին, ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԿԳ ԲՈՂ-ի 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե 375019, Երևան 19, Մարշալ Բաղդասյան պող. 24գ):

Ատենախոսության հետ կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2005թ. հոկտեմբերի 24-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պատմական
գիտությունների դոկտոր  Պ.Ա.Չոբանյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Առաջավոր Ասիայի երկու տարածաշրջանների՝ Հայկական լեռնաշխարհի և Քանաանի միջև հնագույն ժամանակներում տեղի ունեցած փոխափոխման և փոխազդեցությունների պատմությունը գիտական գրականության մեջ գլխավորապես սահմանափակվում է բրոնզեդարի ընթացքում (մ.թ.ա.III-II հազարամյակներ) նկատված նմանատիպ երևույթների մի փոքր տեսությամբ: Որպես կանոն, այդ վկայությունները, ժամանակագրական զգալի ընդմիջումներով, վերաբերում են Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան հուշարձաններում առկա նյութերի հետ ակնառու կամ որոշակի նմանություն դրսևորող սիրիա-պաղեստինյան, նաև մասնակիորեն եգիպտական հնավայրերում (ղամբարաններ) հայտնաբերված գտածոների համադրման արդյունքներին: Առայժմ այդ նմանություններն ընդամենը նկատվել են, սակայն հիմնավոր պատմագիտական (մշակութաբանական, էթնիկական և այլ) եզրակացություններ չեն արվել:

Հայկական լեռնաշխարհի – Քանաան առնչությունների առանձին դրսևորումներ հպանցիկ կերպով արձանագրվել են նախնական հետազոտության ենթարկվել արևմտյան և հայ հնագետների ու մարդաբանների աշխատություններում: Դրանք վերաբերում են վաղ և միջին բրոնզեդարի ընթացքում Հայկական լեռնաշխարհի դեպի Քանաան և հարակից տարածքներ վաղ շրջանի ուսումնասիրողների կողմից առաջարկված էթնիկական տեղաշարժերի խնդրի քննարկմանը: Ըստ այդ ենթադրության¹, Անդրկովկասյան

¹ R.Amiran, Connections Between Anatolia and Palestine in the Early Bronze Age, "IEJ" 2, 1952, p.89-103; Yanik Tepe, Shengavit, and the Khirbet Kerak Ware, "AnSt" 15, 1965, p.165-167; Chronological Problems of the Early Bronze Age I-II: The City of Arad. Early Bronze III: The Khirbet Kerak ware, "AJA" 72/4, 1968, p.316-318; Ch.Burney and D.M.Lang, The Peoples of the Hills: Ancient Ararat and Caucasus, London 1971;

ծագման Կուր-Արաքսյան մշակութային գոտուց տեղի են ունեցել մի քանի շարունակական տեղաշարժեր, որոնց կրողները տարբեր ուղղություններով (Յյուսիսային Միջագետքի կամ Արևելյան Փոքր Ասիայի վրայով) հասել են Քանաան: Վերջինիս համաժամանակյա նյութական մշակույթի նկարագիրը իր վրա կրում է Կուր-Արաքսյան նկատելի ազդեցություն, որը բացատրվում է դրա ստեղծողների անմիջական ներկայությամբ:

Նյութական մշակույթի հուշարձանների ուսումնասիրությունների արդյունքները լրացուցիչ հիմնավորում ստացան մարդաբանական հետազոտությունների շնորհիվ: Զգալի թվով արևմտյան մասնագետներ, հետազոտելով հին առաջավորասիական բարձրաքանդակների վրա առկա նյութերը, հակվեցին այն եզրակացության, որ հին Քանաանի բնակչության մեջ, ի թիվս այլոց, ներկայացված է նաև այսպես կոչված «արմենոիդ» մարդաբանական տիպը, որը ծագում է Հայկական լեռնաշխարհից²: Այս եզրակացությունը վերջին տասնամյակներում ամրապնդվեց Իսրայելի որոշ հնավայրերում կատարված մարդաբանական ուսումնասիրությունների արդյունքներով: Պարզվեց, որ հելլենիստական դարաշրջանի Քանաանում զգալի տոկոս էին կազմում «արմենոիդները»³:

Հնագիտական և մարդաբանական նյութերի հետ մեկտեղ առաջավորասիական գրավոր աղբյուրներում պահպանվել են զգալի քանակությամբ տեղեկություններ, որոնք թույլ են տալիս ամրապնդելու

M.Kelly-Buccellati, The Outer Fertile Crescent Culture: North Eastern Connections of Syria and Palestine in the Third Millennium B.C., "UF" 11, p.413-430 և այլն:

² F.von Luschan, The Early Inhabitants of Western Asia ("The Huxley Memorial Lecture"), London, 1911; Ausgrabungen in Sendschirli I, Berlin, 1943; M.von Oppenheim, Tel Halaf, New York, 1933; C.S.Coon, The Races of Europe, London, 1939; E.Phillips, The Royal Hords, London, 1965; Ferembach, Formation et evolution de la Brachycephalie au Proche-Orient, "Homo" 17, 1966 p.160-172 այլն:

³ H.Nathan, The Skeletal Material from Nahal Hever, "Atiqot" 3, 1961, p.165-175; B.Arensburg, The People in the Land of Israel from the Epipaleolithic to Present Times, Tel Aviv, 1973; G.Childe, The Dawn of European Civilization, Frogmore, 1973; I.Moisheson, Armenoids in Prehistory, Lanham/Maryland, 2001 և այլն:

հնագետների և մարդաբանների կողմից առաջ քաշված վարկածը և լուսաբանելու Հայկական լեռնաշխարհի և հնագույն Քանաանի միջև առկա փոխառնչությունների խնդիրը, որը կարևոր նշանակություն ունի երկու տարածաշրջանների էթնոմշակութային զարգացումների տեսանկյունից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

Ներկա ատենախոսության նպատակն է առկա տարաբնույթ սկզբնաղբյուրների (հնագիտական, մարդաբանական, հին առաջավորասիական սեպագրական, եգիպտական հիերոգլիֆային, անտիկ և հայկական) լայն հենքի վրա ամբողջացնել Հայկական լեռնաշխարհի և Քանաանի միջև հնագույն ժամանակներում տեղի ունեցած փոխշփումների և փոխազդեցությունների պատկերը: Ուսումնասիրությունն ընթանում է հետևյալ տարաբաժանմամբ:

1) Վաղ բրոնզեդարի ընթացքում Հայկական լեռնաշխարհից դեպի Քանաան տեղի ունեցած էթնիկական տեղաշարժեր և դրանց ազդեցությունը Քանաանի բրոնզեդարյան համաժամանակյա մշակույթի վրա:

2) Հնագույն Քանաանում առկա «արմենոիդ» մարդաբանական տիպի նյութերի հետազոտությունների քննարկում:

3) Մ.թ.ա.II հազարամյակի առաջին կեսին Յյուսիսային Միջագետքից դեպի Քանաան սեպագրական և եգիպտական աղբյուրներով վկայված տեղաշարժերի քննություն, որի կրողները «միտանական արիացիներն» էին և խուրրիները:

4) Ըստ Աստվածաշնչի վերականգնվող հրեական ազգածագման վարկածում Յյուսիսային Միջագետքի խաղացած դերը, մասնավորապես Աբրահամ նահապետի տոհմի խառնյան տեղորոշումը, նրա խուրրի-արիական ծագման խնդրի քննարկումը:

5) Հայ և հրեա ժողովուրդների ազգածագման միջև առկա ընդհանրությունների քննարկումը, կապված Հյուսիսային Միջագետքի ունեցած դերի հետ::

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Հնագիտական աղբյուրներ. Ատենախոսության մեջ օգտագործվել են Առաջավոր Ասիայի բազմաթիվ շրջաններում (Անդրկովկաս, Արևմտյան Հայաստան, արևելյան Փոքր Ասիա, Ուրմիա լճի ավազան, Հյուսիսային Միջագետք, Սիրիա, Քանաան, Եգիպտոս և այլն) գտնվող մ.թ.ա.IV-1 հազ. թվագրվող հնավայրերում կատարված հնագիտական և մարդաբանական ուսումնասիրությունների տվյալները:

Գրավոր աղբյուրներ. Ատենախոսության կարևոր աղբյուրագիտական մասն են կազմում Առաջավոր Ասիայի տարբեր երկրներից պահպանված սեպագիր արձանագրությունները: Դրանց շարքում հատկապես կարևոր են մ.թ.ա.III-II հազ. աքքադական, հին ասորեստանյան, Նուզիի, ուգարիտյան և Եգիպտոսի մ.թ.ա.XIVդ. թվագրվող Էլ Ամարնայի արխիվի նյութերը, ինչպես նաև Եգիպտոսի Միջին ու Նոր թագավորության շրջանների հիերոգլիֆային արձանագրությունները: Օգտագործվել են նաև ավելի ուշ շրջանի ասորեստանյան (մ.թ.ա.XIV-VIIդդ.), խեթական (մ.թ.ա.XIV-XIIIդդ.) և ուրարտական (մ.թ.ա.IX-VIIդդ.) սեպագիր աղբյուրները:

Հետսեպագրական ժամանակաշրջանի գրավոր աղբյուրներից օգտագործվել են Աստվածաշունչը, անտիկ շրջանի հույն հեղինակների, վաղ միջնադարյան հայ մատենագիրների, արաբ և հրեա հեղինակների աշխատությունները:

Ատենախոսն օգտվել է հետազոտության առարկային առնչվող մեծաքանակ բազմալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն) մասնագիտական գրականությունից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Ատենախոսությունը դրանում ներառված խնդիրների բազմապլանությամբ և տարբեր գիտական դիսցիպլինների ներառմամբ առաջին փորձն է նյութական մշակույթի և գրավոր աղբյուրների տեղեկությունների հիման վրա ամբողջացնելու Հայկական լեռնաշխարհ – Քանաան փոխառնչությունների հարցը: Այն դնում է սույն խնդրի հիմնասյուները, որոնք հետագայում կարող են էականորեն լրամշակվել և խորացվել:

Ատենախոսության արդյունքները և դրանում օգտագործված աղբյուրագիտական հարուստ նյութերը կարող են օգտագործվել Առաջավոր Ասիայի հնագույն պատմության էթնիկական, քաղաքական և մշակութային պատմության տարբեր խնդիրների ուսումնասիրության համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ.

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը պատմաճանաչողությունն է, տարաբնույթ սկզբնաղբյուրների համալիր օգտագործումը, միևնույն խնդրի շուրջ առկա տարբեր բնույթի նյութերի համադրման միջոցով:

Ատենախոսը որպես հիմք է ընդունել այն տեսական մոտեցումը, ըստ որի երկու և ավելի էթնոմշակութային համալիրների տևական փոխշփումները, անկախ

դրանց կրողների քանակից, պետք է պահպանվեին տվյալ տարածքի նյութական և հոգևոր մշակույթի տարրերի տեսքով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Ատենախոսության հիմնական դրույթները և եզրակացությունները լուսաբանվել են հայցորդի հրատարակած «Հայկական լեռնաշխարհը և Քանաանը. վաղ շփումներ» մենագրության և «Աբրահամի տոհմը և Հյուսիսային Միջագետքը» հոդվածում: Ատենախոսը զեկուցումներով հանդես է եկել ԱՄՆ մի շարք համալսարաններում և գիտական այլ հաստատություններում:

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի «Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. II հազարամյակում» թեմատիկ խմբի կողմից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ.

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է մ.թ.ա. IV հազարամյակի երկրորդ կեսից մինչև մ.թ.ա. II հազարամյակի վերջերը: Նման ընդարձակ ժամանակագրությունը հնարավորություն է ընձեռում քննարկվող խնդիրը լուսաբանել լայն ետնախորքի վրա, որով ստացված եզրակացությունները ավելի մեծ հավաստիություն կարող են ստանալ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից և օգտագործված գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության արդիականությունը, սահմանվում են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև խնդրի գիտական ուսումնասիրվածության աստիճանը:

ԳԼՈՒԽ I. « Հայկական լեռնաշխարհը և Քանաանը. վաղ շփումներ»

Առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում «Կուր-Արաքսյան մշակույթը», ներկայացվում է մ.թ.ա. III հազ. Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցած Կուր-Արաքսյան հնագիտական մշակույթը, դրա առանձնությունները: Սկզբնապես Անդրկովկասում, մասնավորապես Հայաստանի Հանրապետության տարածքում ձևավորված այս հզոր մշակութային արեալը որոշ ժամանակ անց սկսում է տարածվել դեպի արևմտյան Հայաստան, ընդհուպ մինչև արևելյան Փոքր Ասիա, ինչպես նաև հարավ՝ դեպի Իրանական սարահարթ: Մի շարք հաջորդական էթնիկական տեղաշարժերի տեսքով ընթացած Կուր-Արաքսցիների էքսպանսիան հանգեցրեց դրա մշակութային արեալի ընդարձակման: Հաճախ այս շարժումները խաղաղ ներթափանցման բնույթ ունեին, սակայն երբեմն այն ուղեկցվում էր խոշոր ավերածություններով, տեղական մշակույթների ոչնչացմամբ և միանգամայն նոր

իրավիճակի հանդես գալով (օրինակ, Վերին Եփրատի ավազան): Ատենախոսը հակվում է այն տեսակետին, որ Կուր-Արաքսյան մշակույթի ստեղծողները պետք է լինեին հնդեվրոպացիները և խուրրիները, որոնց համագոյակցությունը պարզորոշ նկատվում է նաև հետագա պատմական ժամանակներում:

Երկրորդ ենթազխում՝ «Քիրբեթ-Կերակյան մշակույթը և դրա Կուր-Արաքսյան դրսևորումները» ներկայացվում է վաղ բրոնզեդարի վերջերին (մ.թ.ա. III հազ. կեսերից սկսած) Քանաանում հնագիտորեն հստակ առանձնացող «Քիրբեթ-Կերակյան» անվանումը կրող օտարամուտ մշակույթի Կուր-Արաքսյան զուգահեռների խնդիրը: Դեռևս 1920-ական թվականներից հայտնի այս մշակույթը պարունակում է տեղական արմատներ չունեցող մի շարք մշակութային իրողություններ (խեցեղեն, ճարտարապետություն, հոգևոր-պաշտամունքային բնագավառ), որոնց առնչությամբ մասնագետներից ոմանք առաջարկել են Կուր-Արաքսյան ծագում: Ատենախոսը հավաքել և ի մի է բերել բոլոր այդ օտարամուտ երևույթները, որոնք թույլ են տալիս ամրապնդելու վերոհիշյալ վարկածը: Դա թույլ է տալիս եզրակացնելու, որ Քանաանում վաղ բրոնզեդարի վերջերին հայտնվող Քիրբեթ-Կերակյան մշակույթի կրողները հաստատապես Հայկական լեռնաշխարհից տեղաշարժված բնակչությունն էր:

Ատենախոսության երրորդ ենթազխում՝ «Արմենոիդ-ասիրոիդ մարդաբանական տիպը Քանաանում» ներկայացվում է հնագույն Քանաանի բնակչության մարդաբանական տիպի խնդիրը: Դեռևս XX դարի սկզբներին առաջ քաշված այն տեսակետը, ըստ որի այստեղ առկա է եղել նաև այսպես կոչված «արմենոիդ-ասսիրոիդ» մարդաբանական տիպը, ամրապնդվում է Իսրայելի մի շարք հնավայրերից հայտնաբերված արմենոիդ գանգերի լուրջ փաստարկով: Ատենախոսը անընդունելի է համարում Ի.Մոյշեսոնի տեսակետը, ըստ որի արմենոիդները սկզբնապես բնակվել են Քանաանում և կազմել այստեղի

մեղիթյան մշակույթի կրողները, այնուհետև տեղաշարժվել հյուսիս և այնտեղից միայն մ.թ.ա. IV հազ. վերադարձել Քանաան⁴:

ԳԼՈՒԽ II. «Մ.թ.ա. II հազարամյակի էթնիկական տեղաշարժերը դեպի Սիրիա և Քանաան»

Առաջին ենթազխում՝ «Քաղաքական իրավիճակը Հյուսիսային Միջագետքում, Սիրիայում և Քանաանում» քննարկվում է Հյուսիսային Միջագետքում, Սիրիայում և Քանաանում մ.թ.ա. III հազ. երկրորդ կեսին – II հազ. սկզբներին տիրող էթնոքաղաքական իրավիճակը, դրանից բխող զարգացումները:

Երկրորդ ենթազխում՝ «խուրրիները Միջագետքում, Սիրիայում և հարակից շրջաններում» ներկայացվում է Հյուսիսային Միջագետքում, Սիրիայում և այլ տարածաշրջաններում խուրրիական էթնիկական տարրի խաղաղաձեռն դերը: Նախապես Հայկական լեռնաշխարհի բնակչության մի մասը կազմող խուրրիները մ.թ.ա. III հազ. սկսեցին ակտիվորեն ներթափանցել դեպի Հյուսիսային Միջագետք, Սիրիա և արևելյան Փոքր Ասիա, այստեղ ստեղծելով իրենց բազմաթիվ մանր իշխանությունները: Մասնավորապես, Հյուսիսային Սիրիայի հայտնի Էբլա պետության իշխող վերնախավը պետք է խուրրիական լիներ, քանի որ Էբլայի դիցարանի գլխավոր աստվաջությունների զգալի մասը խուրրիական էր դեռևս մ.թ.ա. III հազ. կեսերին⁵: Ատենախոսը հիմնավորում է այն տեսակետը, ըստ որի խուրրիների շարժումը դեպի Քանաան պետք է սկսվեր արդեն մ.

թ.ա. XVIII դարից⁶: Այս եզրակացությունը ամրապնդվում է ոչ միայն միջագետքյան-սիրիական սեպագրական աղբյուրների տեղեկություններով, այլև հնագիտորեն (Քանաանում այսպես կոչված «խաբուրյան խեցեղենի») հայտնվելը): Դրա

⁴ B. Moisheson, Armenoids in Prehistory, Lanham/Maryland, 2001, p.8ff.

⁵ A. Archi, Substrate: Some Remarks on the Formation of the West Hurrian Pantheon. – In: "Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sedat Alp" (eds. H. Otten et al.), Ankara, p.7.

⁶ G. Wilhelm, The Hurrians, Warminster, 1988, p.16ff.

հետևանքը արդեն մ.թ.ա.XV-XIVդդ. Սիրիայում և Քանաանում մեծաքանակ խուրրիական հատուկ անունների (անձնանուններ, դիցանուններ) վկայությունն է:

Երրորդ ենթագլխում «Արիացիները Առաջավոր Ասիայում» ներկայացվում է հնդեվրոպացի արացիների (կամ հնդարիացիների) դերը Առաջավոր Ասիայում: Չենվելով սեպագրական աղբյուրների, հնագիտական ուսումնասիրությունների և այլ նյութերի վրա, ատենախոսը հանգում է մի շարք եզրակացությունների, որոնք որոշակիորեն պարզաբանում են մասնագիտական գրականության մեջ վաղուց ի վեր բանավեճերի առարկա հանդիսացող այս խնդիրը: Ատենախոսը եզրակացնում է, որ արիացիներն իրոք առկա են եղել և նրանց լեզուն չէր կարող մահացած լինել, ինչպես ենթադրում են շատ մասնագետներ⁷: Այնուհետև, հատուկ ուշադրություն է դարձվում այն իրողության վրա, որ Առաջավոր Ասիայում ամենուրեք արիացիները հանդես են գալիս խուրրիների հետ միասին, ընդ որում միևնույն աշխարհագրական տարածքում և քաղաքական միավորի ներսում: Որպես կանոն, այս երկու էթնիկական խմբերից առաջինը զբաղեցնում էր իշխող դիրք: Արիացիների ներկայությունը Յյուսիսային Սիրիայում և Յյուսիսային Սիրիայում, ինչպես նաև հետագայում Քանաանում, ատենախոսը հիմնավորում է այստեղ թեթև մարտակառքերի հանդես գալու փաստով: Հայտնի է, որ մարտակառքի ձիերի վարժեցման հանրահայտ ձեռնարկում (խեթական տեքստերի շարքում հայտնաբերված այսպես կոչված «Կիկուլիի տրակտատը») կիրառվում են արիերեն մասնագիտական տերմիններ⁸:

Չորրորդ ենթագլխում «Հիքսոսյան խնդիրը» քննարկվում է Առաջավոր Ասիայի հնագույն պատմության առավել վիճահարույց խնդիրներից մեկը, որի հարցում առայժմ մասնագետները ընդհանուր հայտարարի չեն եկել: Ատենախոսը

⁷ A.Kammenhuber A., Die Arier im Vorderen Orient und die historischen Wohnsitze der Hurriter, "Orientalia" 46, 1977, S.129ff.; И.М.Дьяконов, Арийцы на Ближнем Востоке: конец мифа, "ВДИ", 1970/4, с.41слл.

այս խնդիրը դիտարկում է խուրրիների և արիացիների՝ դեպի Սիրիա և Քանաան ընթացած տեղաշարժերի համատեքստում, որ հնարավորություն է ընձեռում նկատելու այս երկուսի միջև առկա կապը: Մ.թ.ա.XVIII-XVIIդդ. խուրրիներն ու արիացիները տեղաշարժվում էին այն նույն շրջանները, որտեղից հիքսոսները մ.թ.ա.XVIIդ. մուտք գործեցին Եգիպտոս և հիմնեցին իրենց շուրջ հարյուրամյա քազավորությունը: Խուրրի-արիական տեղաշարժի ընթացքում Քանաանում հիքսոսների գլխավոր հենակետ Շարուխեն քաղաքում (ժաման. Թել էլ-Աջուլ հնավայրը) և այլուր հնագիտորեն նկատվում է բնակչության մեծ աճ, լայն շինարարական

գործունեություն, որը անհնար է առանձնացնել քաղաքական լավ ավանդույթներ ունեցող նոր էթնիկական տարրի ներկայության փաստից: Ատենախոսը եզրակացնում է, որ հիքսոսները հենց այս եկվոր խուրրիներն ու արիացիներն էին, որոնք համախմբելով տեղական բնակչությանը, ձեռնարկեցին Եգիպտոսի նվաճումը: Կարևոր է այն դիտարկումը, որ հիքսոսյան շրջանի Եգիպտոսի արքայական և այլ դամբարաններում հաճախակի են հանդիպում ձիազգիների ծիսական թաղումներ, մի բան, որ նախկինում անհայտ էր Եգիպտոսի և Քանաանի բնակչությանը, սակայն լավ վկայված է Հայկական լեռնաշխարհում ինչպես ավելի վաղ շրջանում, այնպես էլ հետագայում: Մարտակառքերի, ձիերի, շքեղ մետաղյա զենքերի առկայությունը հիքսոսյան Եգիպտոսում վկայում են դրանց ստեղծողների առնչակցության օգտին Հայկական լեռնաշխարհի բնակչության հետ (հյուսիսմիջագետքյան միջանկյալ օղակի միջոցով): Հիքսոսյան անձնանունների շարքում ակնհայտ արիական անունների առկայությունը ամրապնդում է վերոհիշյալ տեսակետը: Այսպիսով, հիքսոսների էթնիկական կազմը հնարավոր է

⁸ A.Kammenhuber, Hippologia Hethitica, Wiesbaden, 1961; F.Starke, Ausbildung und Training von Streitwagenpferden: Eine hippologisch orientierte Interpretation des Kikkuli-Textes, Wiesbaden, 1995.

ներկայացնել որպես արիացիների (մասամբ նաև խուրիների) կողմից ղեկավարվող քանաանյան սեմական զանգվածի միասնությունը:

Գինգերորդ գլխում «Քանաանի ժողովրդագրությունը և քաղաքական իրավիճակը մ.թ.ա.XV-XIIIդդ.» ներկայացվում է մ.թ.ա.XV-XIIIդդ. Սիրիայի և Քանաանի ժողովրդագրական իրավիճակը, որ հառնում է համաժամանակյա եգիպտական գրավոր աղբյուրներից (Թեյլ-Ամարնայի արխիվը): Վերջիններս պարունակում են մի քանի տասնյակ հիմնականում անձնանուններ (նաև փոքրաթիվ տեղանուններ), որոնք պատկանում էին այս ընդարձակ տարածաշրջանի բնակչության իշխող վերնախավին և որոնք հստակորեն ստուգաբանվում են հնդարիական լեզուների միջոցով (վեդայերենով և սանսկրիտով)⁹: Վերոհիշյալ հավաստի նյութերը թույլ են տալիս եզրակացնելու, որ խուրիների և արիացիների (= հիքսոսներ)՝ տեղաշարժերի հետևանքով այս էթնիկական խմբերը հիմնավորապես հաստատվել էին Սիրիայում և Քանաանում և այստեղ ստեղծել իրենց մեծաքանակ մանր քաղաքական միավորները: Խուրիների և արիացիների մուտքը Քանաան շարունակվեց նաև հետագայում՝ Միտաննիի կազմավորումից հետո՝ վերջինիս էքսպանսիայի շրջանում, ինչպես նաև եգիպտական մի շարք փարավոնների (Թութմոս III, Ամենհոտեպ II) նվաճողական արշավանքների ընթացքում, երբ արիացի և խուրի ռազմագերիները բնակեցվեցին այստեղ: Այս իրավիճակը շարունակվեց մինչև մ.թ.ա.XIIIդ. վերջերը, երբ առաջավորասիական ճգնաժամի հետևանքով սկսված էթնիկական նոր տեղաշարժերի արդյունքում սույն տարածաշրջանի ժողովրդագրությունը կարող էր փոփոխություններ կրել:

⁹ Mironov N.D., 1932-1933 – Aryan vestiges in the Near East of the second millenary B.C., “Acta Orientalia” 11, p.140ff.; R.T.O’Callaghan, Aram Naharaim. A Contribution to the History of Upper Mesopotamia in the Second Millennium B.C., Roma, p.59ff.

ԳԼՈՒԽ III. «Յյուսիսային Միջագետքը և Աբրահամ ճահապետը»

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է հրեաների ազգածագման ավանդության մեջ կարևորագույն դեր խաղացած Յյուսիսային Միջագետքին: Այստեղ քննարկվող խնդիրները վերաբերում են Առաջավոր Ասիայի այս կարևորագույն տարածաշրջանի էթնոմշակութային պատկերին, հնդեվրոպական, խուրիական և հայկական էթնոսների փոխհարաբերություններին, որոնք տեղ են գտել այստեղ:

Առաջին ենթագլուխը՝ «Յյուսիսային Միջագետքի տեղը Առաջավոր Ասիայի պատմության մեջ» նվիրված է Յյուսիսային Միջագետքի աշխարհաքաղաքական դերի վերհանմանը: Ատենախոսը ներկայացնում է այս շրջանի առանձնահատկությունները, որոնք պետք է կարևորագույն խթան հանդիսանային տարբեր ժողովուրդների համագոյակցության, նրանց միջև բազմաբնույթ ընդհանրությունների ձևավորման համար: Այստեղ ձևավորված ընդհանրություններն, հոգևոր և նյութական մշակույթի արժեքները պարբերաբար փոխանցվում էին հարևան տարածաշրջաններ:

Երկրորդ ենթագլուխը՝ «Սուբարտու և Արմանում» ներկայացնում է Յյուսիսային Միջագետքի երկու հնագույն քաղաքական միավորներին առնչվող վիճահարույց խնդիրները: Մասնագիտական կարծիքների և սկզբնաղբյուրների քննության հիման վրա ցույց է տրվում, որ Սուբարտու անվան տակ անհրաժեշտ է հասկանալ ողջ Յյուսիսային Միջագետքը և հարակից տարածքները, իսկ Արմանումը պետք է գտնվեր դրա մի հատվածում: Այս տարածաշրջանի հնագույն բնակչության լեզուն խուրիերենը, սեմական կամ որևէ հնդեվրոպական ծագում ունեցող լեզու չէր: Միայն մ.թ.ա.III հազ. վերջերից է այստեղ սկսում գերակշռել խուրիերենը, որը կարճ ժամանակահատվածում դուրս է մղում «սուբարերենը», իսկ տեղական բնակչությանը ծուլում իր մեջ:

Երրորդ ենթագլխում՝ «Աստվածաշնչային տեղեկությունները հրեաների ծագման վերաբերյալ» ներկայացվում է հրեա ժողովրդի ազգածագման Աստվածաշնչային վարկածը: Նշվում է այդ վարկածի կարևոր քաղաքիչը, այն է՝ հրեաների առաջին նահապետների շուրջ հյուսված պատմությունները միանշանակ վկայում են, որ սրանք Քանաանում եկվոր էին և որ այստեղ մինչև նրանց հայտնվելը բնակվում էին շատ այլ ժողովուրդներ՝ քանաանցիներ, խեթեր, խուրրիներ և այլք: Հրեաների մուտքը Քանաան գուգակցում էր նվաճումը և տեղացի ժողովուրդների հետ համագոյակցությունը:

Չորրորդ ենթագլխում՝ «Աբրահամ նահապետի տոհմը. դրա տեղայնացումը և ժամանակագրությունը» ներկայացվում են հրեաների նախահայր Աբրահամի և նրա տոհմի նախնական բնակության վայրի ու Քանաան գաղթելու վերաբերյալ առկա տեսությունները: Ատենախոսը Աստվածաշնչի, սեպագրական, միջնադարյան քրիստոնեական, եբրայական, մուսուլմանական և այլ աղբյուրների հիման վրա կասկածի տակ է առնում Աբրահամի տոհմի հարավմիջագետքյան վարկածը, որն այսօր գերիշխում է մասնագետների շրջանում, ըստ որի Աբրահամի տոհմը ծագում էր շումերական Ուր քաղաքից: Ներկայացվում են համոզիչ փաստարկներ հոգուտ Հյուսիսային Միջագետքի Ուրֆա քաղաքի: Սեպագրական աղբյուրներից քաղված՝ Ուր կամ նման հնչողությամբ մեծաքանակ տեղանունները Հյուսիսային Միջագետքում և Հյուսիսային Սիրիայում, որոնք թվագրվում են մ.թ.ա. III հազ.- I հազ. առաջին կեսով, ինչպես նաև Ուրֆայի մերձակցությամբ տեղադրվող և Աբրահամի տոհմի մի շարք անդամների անունները ներկայացնող տեղանունների առկայությունը (Նախուր = Աբրահամի պապ Նախոր, Սերուգ = Աբրահամի նախապապ, Տերքա կամ Թիլ շա Տուրախի = Աբրահամի հայր Տերախ-Թարա) լավագույն վկայությունն են հոգուտ Աբրահամի տոհմի հյուսիսային

տեղադրման: Ատենախոսի կարծիքով, Ուռհա - Ուրֆա քաղաքը հենց Աստվածաշնչում հիշատակվող «քաղղեական Ուր» քաղաքն է:

Աբրահամի տոհմի՝ Քանաան գալու ժամանակի պարզաբանման և ընդհանրապես հրեա ժողովրդի կազմավորման վաղ շրջանի գնահատման առնչությամբ ատենախոսը կատարել է Աբրահամի և նրա անմիջական հաջորդների (Հակոբ, Իսահակ և այլն) գործունեության տիպաբանական վերլուծություն: Աբրահամի, նրա որդի Հակոբի և վերջինիս որդի Իսահակի գործունեության մեջ պարզորոշ նկատվող շարժունակությունը և դրանցում մշտապես հիշատակվող կապը Հյուսիսային Միջագետքի հետ թույլ են տալիս Աբրահամի տեղաշարժը Քանաան տեղադրելու մ.թ.ա. XVIII-XVII դդ. ընդգրկող ժամանակաշրջանում: Աբրահամի և նրա տոհմի շարունակական տեղաշարժերը Հյուսիսային Միջագետքից Քանաան, բուն Քանաանում, ինչպես նաև հետագա շարժումը Եգիպտոս և ետ դեպի Քանաան ատենախոսը դիտում է որպես Հյուսիսային Միջագետքից և Սիրիայից խուրրիների և արիացիների տևական միգրացիաների ու շրջանի վկայություն Աստվածաշնչում:

Հինգերորդ ենթագլխում՝ «Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետք. հարաբերությունների բնութագիրը» ներկայացվում է Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի միջև հնագույն ժամանակներում ընթացած փոխհարաբերությունների ընդհանուր բնութագիրը՝ տարաբաժանված ըստ փուլերի: Այստեղ հիմնական շեշտը դրվում է Հայկական լեռնաշխարհից դեպի հարավ ընթացած էթնիկական տեղաշարժերի, դրանց կրողների և Հյուսիսային Միջագետքի վրա այդ միգրացիաների թողած հետևանքների գնահատման վրա: Համապատասխան աղբյուրների և փաստարկների հիման վրա քննարկվում են վաղ բրոնզեդարից սկսած մի քանի հաջորդական միգրացիաների ուղղությունները, դրանցում ներգրավված էթնիկական խմբերը (խուրրիներ,

հնդեվրոպացի արիացիներ, կասսիտներ և մուշկեր): Յուսիսային Միջագետք մուտք գործած հյուսիսային ելակետ ունեցող էթնոսների հետ միևնույն համատեքստում լուսաբանվում է սենական ծագման արամեացիների խնդիրը: Սկզբնապես Սիրիայում բնակվող այս կիսաքոչվոր արամեացիների տարբեր հատվածների հակառակ շարժման արդյունքում սենական տարրը զգալի ներկայություն ապահովեց Յուսիսային Միջագետքում և Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններում (ընդհուպ մինչև Սասուն): Ատենախոսն ընդունում է այն տեսակետը, ըստ որի արամեացիներն իրենց անվանումը պետք է ստանային Յուսիսային Միջագետքի Արմանում տեղանունից և իրենց վրա կրեին այստեղի հնդեվրոպական և խուրրիական էթնիկական խմբերի խոշոր ազդեցությունը: Վերջապես, քննարկվում է Յուսիսային Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի միջև ըստ աբեմենյան, հունական և հայկական աղբյուրների հառնող աղերսները, որոնք պահպանվել են աբեմենյան արքա Դարեհ I-ի (Բեհիսթունի սեպագիր արձանագրությունում հիշատակվող Արմինա երկիրը), հույն աշխարհագիր Ստրաբոնի (հայերի նախահայր թեսսալացի Արմենոսի տեղաշարժերը) և Մովսես Խորենացու «Հայոց պատմության» (Հայկ և Արամ նահապետների գործունեությունը) մեջ:

Վեցերորդ ենթագլխում՝ «Յուսիսային Միջագետքը հայկական և հրեական ազգածագման ենթատեքստում. միջավայր և ընդհանրություններ» քննարկվում է հայկական և հրեական ազգածագման վարկածների միջև պարզորոշ նկատվող ընդհանրությունների խնդիրը: Ատենախոսը հանգում է այն եզրակացության, որ երկու ժողովուրդների ազգածագման առասպելներում (Աստվածաշունչ և Մովսես Խորենացի, նաև հունական աղբյուրներ՝ հայ ժողովրդի համար) նախահայր-նահապետների գործունեությունը սկսվում է Յուսիսային Միջագետքում և հետագայում շարունակվում է նրանց պատմական հայրենիքում: Դա թույլ է տալիս

ենթադրելու, որ տվյալ պարագայում պետք է կարևոր նշանակություն ունենային շատ ավելի վաղ ժամանակներում Յուսիսային Միջագետքին առնչվող երկու ժողովուրդների համար կարևոր դեր խաղացած իրողությունները:

Յոթերորդ ենթագլխում՝ «Խուրրիները և հայերը» ներկայացվում են խուրրիներն լեզվի (նաև խուրրիներենին ազգակից ուրարտերենի) թողած խոշոր ազդեցությունը հայերենի վրա: Խուրրիներենից և ուրարտերենից հայոց լեզվին անցած հղվող բառերը ներկայացնում են ընդամենը այդպիսի փոխառությունների միայն մի փոքր մասը: Կան նաև զգալի քանակությամբ հակառակ ուղղությամբ կատարված փոխառություններ: Այս ամենը իր հերթին վկայում է խուրրիների և ուրարտների հետ հայ ժողովրդի ունեցած տևական սերտ շփումների մասին:

Ութերորդ ենթագլխում՝ «Խուրրիական և արիական ազդեցությունը Քանաանում» ներկայացվում է մի կողմից հայ ժողովրդի, մյուս կողմից՝ հրեաների վրա խուրրիների և արիացիների ունեցած լուրջ ազդեցության խնդիրը: Ատենախոսը եզրակացնում է, որ դա չի կարելի դիտարկել որպես կազմավորված ժողովուրդների վրա վերոհիշյալ էթնիկական խմբերի ազդեցություն: Խուրրիները և արիացիները պետք է հանդիսանային որպես ենթաշերտ կամ վերնաշերտ հրեաների և հայերի կազմավորման գործընթացում: Վերոհիշյալ երկու էթնոսները պետք է յուրատեսակ կապող օղակ հանդիսանային Հայկական լեռնաշխարհի և Քանաանի միջև, այն առումով, որ հայ և հրեա ժողովուրդների մեջ, նրանց կազմավորման շրջանում, մուտք են գործել զգալի քանակությամբ խուրրիներ և արիացիներ, որոնց միջոցով էլ ձևավորվել են որոշակի քանակությամբ ընդհանրություններ:

Իններորդ ենթագլխում՝ «Խուրրիական և արիական ազդեցությունը Քանաանում» ներկայացվում են համապատասխան նյութեր Աստվածաշունչից, որոնք վկայում են վաղ հրեական հասարակությունում հյուսիսմիջագետքյան

կենցաղի և սովորույթների («Որդեգրում», «Կին-քույր ամուսնություն», «Անդրանիկության իրավունքի փոխանցում», «Տնային կուռքերի ապահովում», «Մահամերձի օրհնություն», «Համայնքի կոլեկտիվ պատասխանատվություն») նկատելի առկայության մասին: Ատենախոսը առանձնացնում է Աստվածաշնչի Գիրք Ծննդոցում նահապետների կողմից օգտագործված որոշ բառեր և արտահայտություններ, որոնք չեն բացատրվում եբրայերենով, սակայն որոնց համարժեքները կարելի է գտնել հնդեվրոպական լեզուներում: Օրինակ, *քիրեհ* (սանսկրիտում *cara-* «վարձուք, կերպ, եղանակ», հին պարսկ. *car-* «հնար, ճար, միջոց», որ հանգում է հնդեվր. *q'er-* «ամել, գործել» արմատին; հայ. *ճար, ճեղար շահարդոտա* (հայ. *շեղջիղ* «ղեզ, կույտ», որը բխում է հնդեվր. *k'eu-* «ուռչել» արմատից):

ԱՄՓՈՓՈՒՄ

Ատենախոսության հիմնական եզրակացությունները.

1) Բրոնզեդարի ընթացքում (մ.թ.ա. III-II հազ.) Հայկական լեռնաշխարհից և դրան հարավից հարող տարածքներից (Հյուսիսային Միջագետք) հնագիտորեն (միջին բրոնզեդարի համար՝ նաև գրավոր աղբյուրներով) վկայված են առնվազն երկու խոշոր էթնիկական տեղաշարժեր: Առաջինը մ.թ.ա. XXVII-XXVI դդ., երկրորդը՝ մ.թ.ա. XVIII-XVII դդ.: Առաջինի հետևանքով Սիրիայում և Պաղեստինում հաստատվում է Հայկական լեռնաշխարհից տեղաշարժված հոծ բնակչություն, որը վճռական դեր է խաղում նշված տարածաշրջանի վաղ բրոնզեդարյան մշակույթի կործանման գործում: Այս առաջին տեղաշարժային ալիքի կրողները, տեղի արևմտասեմական բնակչության հետ միասին, պետք է կարևորագույն դեր

խաղային մասնավորապես Քանաանի միջին բրոնզեդարյան մշակույթի զարգացման գործում:

2) Սիրիայում և Քանաանում հաստատված Հայկական լեռնաշխարհի բնակչությունը, այսպիսով, հետագա մի քանի դարերի ընթացքում (մինչև մ.թ.ա. XVIII դ.) կազմել է այս տարածաշրջանի բնակչության մի ստվար՝ գերիշխող զանգվածը: Հաշվի առնելով նրանց գալստյան առանձնահատկությունները (մի շարք հնավայրերում հնագիտորեն վկայված են լուրջ ավերածություններ), որոշ շրջաններում եկվորները պետք է կազմեին քիչ թե շատ խոշոր անկլավներ: Դրա հիման վրա կարելի է եզրակացնել, որ հետագայում Սիրիա և Քանաան մուտք գործած սեմական և այլ բնակչության համար սրանք արդեն պետք է դիտվեն որպես ենթաշերտ (սուբստրատ):

3) Միջին բրոնզեդարյան տեղաշարժերի ընթացքում, որում հիմնական մասնակիցները խուրրիներն ու արիացիներն էին, Սիրիայի և Քանաանի տարածքի մեծ մասում այս էթնոսների կողմից ստեղծվեցին մեծաքանակ մանր իշխանություններ: Այս տեղաշարժային ալիքների վկայությունը եգիպտական գրավոր աղբյուրներում հիշատակվող՝ հիքսոսների կողմից Եգիպտոսի նվաճումն էր: «Հիքսոսներ» հավաքական անվան տակ եգիպտացիները նկատի ունեին ոչ թե մի կոնկրետ էթնոս, այլ Քանաանում այդ պահին ձևավորված տեղացի և եկվոր էթնիկ խմբերի (արիացիներ, խուրրիներ, սեմիտներ) ամբողջություն:

4) Հայ և հրեա ժողովուրդների միջև առկա մարդաբանական ընդհանրությունների հիմքում, անկասկած, ընկած է վերը նշված տեղաշարժերի հետևանքով Քանաանում Հայկական լեռնաշխարհի բնակչության հաստատումը:

5) Հյուսիսային Միջագետքը Հայկական լեռնաշխարհը և Քանաանը միմյանցից տարանջատող և միաժամանակ կապող տարածաշրջան էր, կոնտակտային գոտի, որն իր մեջ ամփոփում էր երկուսի քաղաքակրթական-

մշակութային արժեքները, կատարելով դրանց փոխանցողի դերը: Այստեղ էին հանդիպում միմյանց վերոհիշյալ տարածաշրջաններում բնակվող ժողովուրդները, այստեղ էին դրվում պատմամշակութային և էթնիկական բոլոր փոխառնչությունների և ընդհանրությունների հիմքերը:

6) Հյուսիսային Միջագետքում խուրրիական էթնոսի կարևորագույն դերի մասին եզրակացությունը հենվում է այն անառարկելի փաստի վրա, որ այստեղ մ.թ.ա.III հազ. կեսերից ընդհուպ մինչև մ.թ.ա.I հազ. կեսերը, շուրջ երկու հազար տարի, վկայված է խուրրիական հոծ բնակչություն, որը սերտ շփումների մեջ էր հյուսիսի, հարավի և արևմուտքի ժողովուրդների հետ (շումերներ, հնդեվրոպացիներ, սեմիտներ և այլն):

7) Աստվածաշնչի և սեպագրական աղբյուրների տեղեկությունների համադրումը հանգեցնում է այն եզրակացության, որ, ի դեմս հրեա ժողովրդի նախահայր Աբրահամ նահապետի և նրա անմիջական հետնորդների, գործ ունենք Հյուսիսային Միջագետքից դեպի Քանաան մ.թ.ա.II հազ. առաջին կեսի ընթացքում տեղի ունեցած ժողովուրդների (խուրրի-հնդարիական) տեղաշարժերի կրողների հետ:

8) Աստվածաշնչում Աբրահամ նահապետի և նրա սերունդների գործունեությունը նկարագրող հատվածների քննության արդյունքում ի հայտ են գալիս զգալի քանակությամբ հյուսիսմիջագետքյան ծագման արիական և խուրրիական սովորույթներ ու տերմիններ, որոնք լավագույնս են հիմնավորում նախորդ կետում առկա եզրակացությունը:

9) Մի կողմից Հյուսիսային Միջագետքի խուրրիների և Քանաանի վաղ հրեական հասարակության, մյուս կողմից՝ խուրրիների և հայ ժողովրդի միջև լեզվաբանորեն վկայված ընդհանրությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ երկու ժողովուրդների միջև, դրանց կազմավորման փուլում, ձևավորվել էին զգալի

քանակությամբ ընդհանրություններ, որոնց աղբյուրը և կրողը Առաջավոր Ասիայում լայնորեն տարածված արիացիներն ու խուրրիներն էին: Թերևս, Աբրահամ նահապետը և ի դեմս նրա, համաձայն Աստվածաշնչի, Քանաանում հաստատված էթնիկական խումբը պետք է արիական կամ խուրրիական ծագում ունենար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1) Հայկական լեռնաշխարհը և Քանաանը. վաղ շփումներ, Երևան, 2005: Զանգակ, 64 էջ.
- 2) Աբրահամի տոհմը և Հյուսիսային Միջագետքը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXIV, Երևան, էջ.267-276.

АХМАРАНЯН ДЖОН ДЖОРДЖ

ПАТРИАРХ АВРААМ (ВЗАИМООТНОШЕНИЯ АРМЯНСКОГО НАГОРЬЯ
И ХАНААНА В IV-II ТЫС. ДО Н.Э.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 "Всеобщая история".

Защита диссертации состоится 24 ноября 2005г., в 14⁰⁰ часов, по адресу 375019, г.Ереван, просп. Маршала Баграмяна 24г, на специализированном совете 006 при Институте востоковедения НАН РА.

РЕЗЮМЕ

Представленная диссертация посвящена изучению исторических контактов между населением Армянского нагорья и Ханаана, имевших место в период IV-II тыс. до н.э.

Представленная диссертация посвящена изучению контактов древнейших населений Армянского нагорья и Ханаана в период IV-II тыс. до н.э. По сути дела данная проблема еще не подвергалась основательному изучению ни в зарубежной, ни в армянской историографии. Учеными были замечены и сделаны предварительные предположения по поводу отдельных проявлений контактов изучаемых регионов.

Источниками при изложении диссертации являются древнейшие письменные памятники (клинописные ассирийские, хеттские, урартские, египетские иероглифические, древнегреческие, древнееврейские, средневековые армянские и арабские), археологические материалы, а также антропологические данные.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и списка сокращений.

Во введении обосновывается актуальность и важность темы, формулируются цели и задачи исследования, разъясняются методологические основы работы, описывается структура диссертации и ее практическое значение.

В первой главе диссертации ("Армянское нагорье и Ханаан. ранние контакты") представлены археологические и антропологические материалы, которые являются надежным доказательством того, что еще с раннебронзового периода с территории Армянского нагорья (так называемая "Куро-Араксская культура") в сторону Сирии и Ханаана происходил ряд миграционных волн, в результате которых Ханаан был заселен значительным количеством пришлого

населения. Антропологически же арменоиды зафиксированы в Ханаане вплоть до установления римского владычества в Палестине.

Во второй главе ("Этнические передвижения в Сирию и Ханаан во II тыс. до н.э.") исследована проблема переселения хурритов и индоевропейских арийцев Северной Месопотамии и Северной Сирии, задолго до того являвшихся населением Армянского нагорья, в Ханаан в XVIII-XVII вв. В результате данной миграции, происходившей временами в виде постепенной инфильтрации в местную среду, в Ханаане появляются многочисленные анклавы пришлого этнического элемента, управлявшихся арийско-хурритскими династиями.

В третьей главе ("Северная Месопотамия и патриарх Авраам") посвящена исследованию вопроса о роли Северной Месопотамии в образовании древнееврейской нации, которая являлась первоначальным местом обитания патриарха евреев Авраама. Диссертант формулирует теорию, согласно которой именно здесь были заложены начала того этнокультурного субстрата (или суперстрата), которая в дальнейшем вошла в состав этногенеза еврейской, а также частично армянской нации, зафиксированное как Библии, так и в трудах армянского историка Мовсеса Хоренаци и древнегреческого географа Страбона. В версиях обеих традиций Северная Месопотамия считается местом первоначального обитания праотцов евреев Авраама и армянского Хайка.

В Заключении диссертации подводятся основные выводы исследования.

АНМАРАНЯН ДЖОН ДЖОРДЖ

THE PATRIARCH ABRAHAM (THE RELATIONS BETWEEN THE
ARMENIAN HIGHLAND AND CANAAN IN THE IV-II MILLENNIUMS B.C.)

